ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3

ք. Երևան «01 » հուլիսի 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոտայք Շին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գևորգյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակային տարածքներին խաղահրապարակների հիմնանորոգման ու պահպանման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր:** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **10728948 (տաս միլիոն յոթ հարյուր քսանութ հազար ինն հարյուր քառասունութ)** ՀՀ դրամ, որից **1788158 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար հարյուր հիսունութ)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Կոտայք Շին» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	«Կոտայք Շին» ՍՊԸ
Կենտրոնական գանձապետարան	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք
Հ/Հ900032098528	«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 1150010981730100
	ՀՎՀՀ 03535759
Է. Կիրակոսյան ----------	Գ. Գևորգյան ----------
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.S	Կ.S

Հավելված թիվ 1
« 01 » հուլիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3>> գնման պայմանագրի

Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի 2 և Գայի 8 շենքերի հարակից խաղահրապարակի վերակառուցման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
1	Առկա կառուսելի ապամոնտաժում	հատ	2.000	2.000	4.000
2	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ^2	180.00	1.000	180.000
3	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ^2	180.00	4.000	720.000
4	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ^3	1.350	10.000	13.500
5	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ^3	1.350	10.000	13.500
6	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 50մմ հաստությամբ	մ^2	27.00	5.000	135.000
7	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ^3	0.630	10.000	6.300
8	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ	գմ	31.50	5.500	173.250
9	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ^3	1.740	10.000	17.400
10	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ	գմ	87.00	4.500	391.500
11	Արհեստական խոտածածկույթ	մ^2	30.0	6.000	180.000

12	Ռետինե ծածկույթի պատրաստում 30մմ հաստությամբ	$մ^2$	55.000	9.000	495.000
13	Լուսատուների տեղադրում /LED/ /գոյություն ունեցող հենասյուների վրա/	հատ	4	17.000	68.000
14	Պատերի շարվածք կ/ձևի տուֆ քարից 20սմ հաստությամբ /աղբամանների համար նախատեսված բաժանարար պատ/	$մ^3$	1.856	20.000	37.120
15	B-15 դասի բետոնից /վերանորոգում/ 6մ2	$մ^3$	0.600	35.000	21.000
16	Արտաքին պատերի լավորակ ց/ավազե սվաղ /հարակից շինության ճակատ/	$մ^2$	32.000	1.400	44.800
17	Հրակից շինության ճակատի նկարազարդում	$մ^2$	6.000	2.500	15.000
18	Խաղադաշտի արգելապատի գլխատախտակի փոխարինում	$մ^2$	7.00	2.700	18.900
19	Ներդիր էլեմենտների փոխարինում	տն	0.007	800.000	5.400
20	Բասկետբոլի տախտակների փոխարինում	$մ^2$	2.28	2.700	6.156
21	Բասկետբոլի օղակ (կ-տ)	հատ	2	20.000	40.000
22	Ցանց բասկետբոլի	հատ	2.000	7.000	14.000
23	Ֆուտբոլի դարպասի ցանց	կ-տ	2	110.000	220.000
24	Փայտային մասերի մշակում	$մ^2$	231.000	0.300	69.300
25	Փայտային մասերի ներկում	$մ^2$	462.000	0.800	369.600
26	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	170.000	0.800	136.000

*27	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	4.000	5.000	20.000
*28	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	5.000	2.000	10.000
*29	Խաղասարքերի տեղադրում ամրացումով	հատ	3.000	7.000	21.000
	Մետաղական բազրիք H=90սմ L=35գմ				
30	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.500	3.000	7.500
31	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	1.750	0.800	1.400
32	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.425	3.000	4.275
33	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	0.350	10.000	3.500
34	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	0.400	35.000	14.000
35	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0075	550.000	4.145
36	Մետաղական բազրիքի պատրաստում մետաղական խողովակներից	գմ	35.000	2.000	70.000
37	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	63.70	1.000	63.700
38	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	70.00	1.100	77.000
39	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	125.00	0.500	62.500
40	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.468	35.000	16.381

	Մետաղական ցանկապատ H=4,2մ 87,8մ				
41	Բետոնե հիմքերի քանդում	$մ^3$	6.363	15.000	95.445
42	Գոյություն ունեցող մետաղական սյուների ապամոնտաժում- 120x120x4մմ H=4,2մ 14հատ /հետագա վերատեղադրումով/	տն	0.844	35.000	29.532
43	Մետաղական սյուների վերատեղադրում- 120x120x4մմ H=4,2մ 14հատ)	տն	0.844	50.000	42.189
44	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.800	3.000	8.400
45	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	2.604	0.800	2.083
46	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.372	3.000	1.117
47	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	0.196	10.000	1.960
48	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-12,5 դասի բետոնից	$մ^3$	2.100	35.000	73.500
49	Ամրանի արժեքը A500c դասի Φ10մմ	տն	0.037	350.000	13.000
50	Թերթապողպատի տեղադրում 100x100x8մմ,	տն	0.0088	550.000	4.836
51	Մետաղական ցանկապատի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	1.455	120.000	174.589
52	Ամրանի արժեքը A500c դասի Φ6մմ	տն	0.102	350.000	35.597
53	40x40x3մմ անկյունակի արժեքը	գմ	458.14	0.900	412.322
54	Մետաղական ամրանային ցանց 50x50x3մմ	տն	0.506	400.000	202.259

55	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	267.246	0.800	213.796
	Ընդամենը				5080.752
	Շահույթ	2%			101.615
	Ընդամենը				5182.367
	Սարքավորումներ				387.000
	Նստարան	հատ	4	36	144.000
	Աղբաման	հատ	5	18	90.000
	Խաղասարքեր	հատ	3	51	153.000
	ԱԱՀ	20%			1113.873
	Ընդամենը				6683.240

Նոր Նորք վարչական շրջանի Թոթովենցի 2 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	3-րդ կարգի բնահողի հարթեցում մեխանիզմով	$մ^2$	375.500	0.013	4.882
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 68,9մ2	$մ^3$	2.756	4.000	11.024
3	Խճի շերտի քանդում 68,9մ2	$մ^3$	8.268	0.500	4.134
4	Ցանկապատի ապամոնտաժում	գմ	60.000	0.400	24.000
5	Դարպասի ապամոնտաժում	$մ^2$	5.400	4.000	21.600

6	Ավազատուփի ապամոնտաժում	հատ	1.000	5.000	5.000
7	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	22.058	3.000	66.173
	Շին վերանորոգման աշխատանքներ				
8	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	$մ^3$	0.352	10.000	3.520
9	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ	գմ	17.60	5.500	96.800
10	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	$մ^3$	2.420	10.000	24.200
11	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x160մմ	գմ	121.00	4.500	544.500
12	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	$մ^3$	2.115	10.000	21.150
13	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	$մ^3$	2.115	10.000	21.150
14	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 50մմ հաստությամբ	$մ^2$	42.30	5.000	211.500
15	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	48.000	1.700	81.600
16	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	57.600	4.000	230.400
17	Բուսահողի փռում ձեռքով	$մ^2$	240.00	0.200	48.000
18	Սիզամարգերի տեղադրում	$մ^2$	240.00	0.150	36.000
19	Կապույտ ավազե խաղահրապարակի համար	$մ^3$	3.560	6.000	21.360

20	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ^2	66.20	1.000	66.200
21	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ^2	66.20	5.000	331.000
*22	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	4.000	5.000	20.000
*23	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	3.000	2.000	6.000
*24	Խաղասարքերի տեղադրում ամրացումով /սղարան/	հատ	1.000	7.000	7.000
*25	Նոր պլաստմասե ավազատուփի տեղադրում 2,5x2,5մ	հատ	1.000	12.000	12.000
	Մետաղական բազրիք H=90սմ L=39,9գմ				
26	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	2.850	3.000	8.550
27	Բնահողի ետլիցք ձեռքով	մ^3	1.995	0.800	1.596
28	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.625	3.000	4.874
29	Խճի շերտի պատրաստում	մ^3	0.399	10.000	3.990
30	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ^3	0.456	40.000	18.240
31	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0086	500.000	4.296
32	Մետաղական բազրիքի պատրաստում մետաղական խողովակներից	գմ	39.900	2.000	79.800
33	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	72.62	1.000	72.618

34	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	79.80	1.100	87.780
35	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	142.50	0.500	71.250
36	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.534	30.000	16.006
	Մետաղական ցանկապատ H=1,5մ 31,9գմ				
37	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.320	3.000	6.960
38	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	2.158	0.800	1.726
39	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.309	3.000	0.926
40	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	0.162	10.000	1.624
41	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-12,5 դասի բետոնից	$մ^3$	1.740	40.000	69.600
42	Ամրանի արժեքը A500c դասի Φ10մմ	տն	0.031	350.000	10.772
43	Թերթապողպատի տեղադրում 100x100x8մմ,	տն	0.0073	500.000	3.642
44	Մետաղական ցանկապատի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	0.604	100.000	60.359
45	76x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	25.52	2.200	56.144
46	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	104.40	1.100	114.840
47	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	176.32	0.500	88.160
48	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	62.640	0.700	43.848

	Էլեկտրալուսավորություն /3հատ/ H=3մ				
49	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	1.200	3.000	3.600
50	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	0.600	0.800	0.480
51	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.110	3.000	3.330
52	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	0.150	10.000	1.500
53	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	0.384	40.000	15.360
54	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	3.000	14.000	42.000
55	89x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	10.500	4.000	42.000
56	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	9.000	1.500	13.500
57	Լուսատու գնդային /100Վտ լամպով/ /ԼԵԴ/	հատ	6	10.000	60.000
58	Բաժանարար տուփիկ	հատ	3.000	1.800	5.400
59	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա	հատ	3.000	4.000	12.000
60	ԱԲԲԳ 2x2,5մմ2մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	43.500	0.300	13.050
61	ՊՎՔ խողովակի անցկացում	գմ	43.500	0.400	17.400
62	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	1.200	1.211	1.453

	Ընդամենը				**2977.866**
	Շահույթ	**2%**			59.557
	Ընդամենը				**3037.423**
	Սարքավորումներ				**334.000**
	Նստարան	հատ	4	36	144.000
	Աղբաման	հատ	3	18	54.000
	Խաղասարքեր	հատ	1	51	51.000
	Պլաստմասե ավազատուփ 2,5x2,5մ	հատ	1	85	85.000
	ԱԱՀ	**20%**			674.285
	Ընդամենը				**4045.708**

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900032098528
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրությունը)
Կ.Տ

Կապալառու
«Կոտայք Շին» ՍՊԸ
«Կոտայք Շին» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք
«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
Հ/Հ 1150010981730100
ՀՎՀՀ 03535759

Գ. Գևորգյան ----------
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված 1.1
« » հուլիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3>> գնման պայմանագրի

ՆԿԱՐԱԳԻՐ
սարքերի և սարքավորումների

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
4	Նստարան			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի
4	Աղբաման			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի
4	Մանկական խաղասարք			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի
5	Նստարան			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի
5	Աղբաման			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի
5	Մանկական խաղասարք			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի
5	Պլաստմասե ավազատուփ			«Կոտայք Շին» ՍՊԸ	համապատասխան նախագծի	1 տարի

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900032098528
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրությունը)
Կ.Տ

Կապալառու
«Կոտայք Շին» ՍՊԸ
«Կոտայք Շին» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք
«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
Հ/Հ 1150010981730100
ՀՎՀՀ 03535759

Գ. Գևորգյան ----------
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«01» հուլիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի 2 և Գայի 8 շենքերի հարակից խաղահրապարակի վերակառուցման աշխատանքներ	***Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից***	***30.09.2020թ***
6	Նոր Նորք վարչական շրջանի Թոթովենցի 2 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	***Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից***	***30.09.2020թ***
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900032098528
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրությունը)
Կ.Տ

Կապալառու
«Կոտայք Շին» ՍՊԸ
«Կոտայք Շին» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք
«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
Հ/Հ 1150010981730100
ՀՎՀՀ 03535759

Գ. Գևորգյան ----------
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 3
« » հուլիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
	45611300		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի 2 և Գայի 8 շենքերի հարակից խաղահրապարակի վերակառուցման աշխատանքներ	---	---	---	---	---	[illegible]	6 683 240	6 683 240	6 683 240	6 683 240	6 683 240	6 683 240	6 683 240
		Նոր Նորք վարչական շրջանի Թոթովենցի 2 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	---	---	---	---	---	[illegible]	4 045 708	4 045 708	4 045 708	4 045 708	4 045 708	4 045 708	4 045 708

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900032098528
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրությունը)
Կ.Տ

Կապալառու
«Կոտայք Շին» ՍՊԸ
«Կոտայք Շին» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք
«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
Հ/Հ 1150010981730100
ՀՎՀՀ 03535759

Գ. Գևորգյան _____
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 01 » հուլիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 01 » հուլիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3>> գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱԲՈՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “АБОВЯН”
“ARMBUSINESSBANK” CJSC
“ABOVYAN” BRANCH

N 28-161

«01» հունվար 20 20

ԵՐԱՇԽԻՔ N 02
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և <<Կոտայք Շին>> ՍՊԸ-ի միջև կնքվելիք **N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2.Երաշխիքով <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **1 072 894.8 (մեկ միլիոն յոթանասուներկու հազար ութ հարյուր իննսունչորս ամբողջ ութ տասնորդական)** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015000046 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ Արարատ Հարությունյան

07.01.2020թ.
անուն, անունախիր, տարեթիվ

Հասցե՝ ՀՀ, ք. Աբովյան, Ռուսիայի 1/20 ; Հեռախոս՝ (+37460) 37 25 28; Էլ.փոստ՝ abovyan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Россия 1/20, г. Абовян, РА; Телефон: (+37460) 37 25 28; Эл.почта: abovyan@armbusinessbank.am; Сайт: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱԲՈՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “АБОВЯН”
“ARMBUSINESSBANK” CJSC
“ABOVYAN” BRANCH

N 28-160

«01» հոկտեմբեր 2020 թ.

ԵՐԱՇԽԻՔ N 01
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3 ծածկագրով կազմակերպված կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում <<Կոտայք Շին>> ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք NԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ռակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով __*«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն* (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **10 728 948.0 (տաս միլիոն յոթ հարյուր քսանութ հազար ինը հարյուր քառասունութ)** ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի __900015000046_____հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N _____ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3____ ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-3 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերի ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ Վարուժան Հարությունյան

07.01.2020թ.
ամիսը, անունը, տարեթիվը

Հասցե՝ ՀՀ, ք. Աբովյան, Ռոսիայի 1/20 ; Հեռախոս՝ (+37460) 37 25 28; Էլ.փոստ՝ abovyan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Россия 1/20, г. Абовян, РА; Телефон: (+37460) 37 25 28; Эл.почта: abovyan@armbusinessbank.am; Сайт: www.armbusinessbank.am